

ՍՈՒԱԾ ԾՆՈՒՆԴԻ ԶԴՅԵ ՔՈՒԱՆ

Շունչը եղներուն
Գեղմը գառներուն
Ցարդը մըսուրին
Շունչը երկրին մէջ
Շունչը աստղերուն
Առած է մարմին
Ցաւով ու սիրով

Բեթղեհէմի երկընքին տակ ոչ մէկ ատեն
Բեթղեհէմի ծառերուն տակ ոչ մէկ ատեն
Բեթղեհէմի զիշերին մէջ ոչ մէկ ատեն
Աէրը աշնքան շըքեղութեամբ
Այնքան տրտում երազանքի պայծառութեամբ
Կեանքին պարտէզը մըտած էր խունկի լուսեղ
[մատուցումով]

Եւ անոր հետ սիրոյ վըճիտ սիրոյ անհուն ցը-
[նորքին հետ

Շունչը եղներուն
Գեղմը գառներուն
Ցարդը մըսուրին
Բեթղեհէմի զիշերին մէջ նոր իմաստով մը յա-


[բուցուած
Նոր մարդկութեան մը սրտին շուրջ
Կը հիւսէին զեղեցկութիւն մը նորաստեղծ
Ո՞ւր կը յանգէր լոյսը ծաթող ամէն քարէ
Ամէն ջուրի հայելիին
Ամէն ծառի տերեւոյթէն լոյսը բացուող
Ո՞ւր կը տանէր ինչ հեքեաթի ճըրագներուն
Ո՞ւր կը տանէր ինչ բերկրանքի մատեաններուն
Ինչ ըղձանքի ինչ համբոյրի կըրակներուն
Լոյսը ցայտող ամէն քարէ
Ու քարեղէն ամէն ամէն կերպարանքէ
Լոյսը բացուող ամէն ձեռքէ ալօթաձոյլ
Ո՞ւր կը տանէր ինչ թափորի զիշերական
Ինչ ուխտաէտ ուղեւորի մըուայլ ու հոծ հո-
Յոլքը վըճիտ իր խորհուրդին

Տըղան որուն ոտքին առջեւ ծնրադիր
Թագաւորները եկան
Տըղան որուն խունկ եւ ըստաշխ ձօնեցին
Ու սափորներ մեղրի իւղի սափորներ
Տըղան որուն մարմինն եղներ տաքցուցին

Տըղան որուն սիրու խորունկ կը տրոփէ
Պարտէզին մէջ աստղերուն
Ինչո՞ւ ծընաւ - ծաղիկներուն հարցուցէք
Աղքատներուն հարցուցէք
Որբ տղաներուն հարցուցէք
Ու գալկահար կոյսերուն
Արտասուազող հոգիներուն հարցուցէք
Ու ճրագներուն որ կը վասին սուզի մէջ
Ու ձեռքերուն որ կը ձուլուին հրաժեշտով
Ու բիթերուն որ մըուայլով կը լեցուին

Տըղան ծընաւ որպէսզի մօտն այս երկրին
Սրտի մը պէս ուրիշ սրտի մը գիմաց
Երկինքը ջինջ բաքախէր
Իր կրակներով իր խորհուրդի բոցերով
Տըղան ծընաւ որպէսզի օձը բարի
Տատրակներուն հետ ապրէր
Որպէսզի մարդը մանկութեան արեւէն
Չըհնուանար տարիքով
Բեթղեհէմի ձիթենիներն այն ատեն
Դասըն իւլով ինչ քաղցրութիւն կու տային
Ինչ բերկրանք էր ձայներուն մէջ տուներուն
Խուճանպ մը կար հոգիներուն մէջ լոյսի
Թաւ ու խորունկ արբեցումով երկնային
Մազերուն մէջ կոյսերուն
Նոր ծաղիկներ կը բուրէին - ձայն մը կար
Անոնց հոգին զրդով վըճիտ ըղձանքով
Ան սօսափ չէր տերեւի
Ոչ ալ կարկաչը բիւրեղեայ ջուրերուն
Զայնը կու զար Երկընքին
Աստեղալար արձագանքի մը նըման

Հովիւներ կ'իջնեն
Իրենց հօտերով
Ինչ տօն է ձիւնի
Ինչ տօն է լոյսի
Երազ է արդեօք
Հովիւներ կ'իջնեն
Լըութեան ճամբէն
Այնքան լըութեան
Բոպիտակ ճամբէն
Ու սրտի ձայն է
Ոգին մէջ անցնող



Բեթղեհէմի լուսապըսակ բըլուրներէն
Մըսուրին մէջ արդայ մը կայ
Մըսուրին մէջ Աստուած մը կայ
Եւ աշխարհն է պարտէզի պէս առկա-
[խուած

Երկինքներու կամարէն
Աշխարհն է լայն կրկէսի պէս
Քուրմերը փարթամ
Ընծաներ բերին
Հեռու հեռու երկիրներէ
Մըսուրին վերեւ
Մինչեւ արշալոյս
Բիւրեղացաւ աստղ մը պայծառ

Դարերը անցան
Աստղին բիւրեղն է փըշրըսած
Ու սլաքին վրայ ժամանակին
Արին կայ գեռ
Տըղուն խօսքերը մընացին
Սուրբ զաղանիքներ
Վուրբ զաղանիքներ
Վէհ զաղանիքներ որ կը բացուին
Սըրտերու մէջ արտասուազող

Այս գիշեր տօնն է
Ուբ տըղաներուն
Ու տընանկներուն
Տօնն է կոյրերուն
Ու անոր դէմքը կը տեսնեն
Տօնն է ձեռքերուն
Ու կը ձուլուին ալօթքի մէջ
Այս գիշեր տօնն է

Սուգի ճրագներուն
Զիւնի և լոյսի
Հին ճամբաներուն
Հովիւներու տօն

Զիթենիներու
Տօնն է քերթողին
Ու մըսուրին ճամբուն վըրայ
Նստած տրտում ու մենաւոր
Ցոյսին սափորը սրտին դէմ
Նոր աստուածի մը գալուստին կը սպասէ...
Արսէն Երկաթ

Ի շունչ է միայն
Աստղերուն գպչող
Կէզէ եղէզ
Են մը կայ շուրթի
Երեւէ տերեւ
Ամբոյր մը կանչող
Ովիւներ կ'իջնեն

Երազ է արդեօք

Հովիւներ կ'իջնեն

Լըութեան ճամբէն

Այնքան լըութեան

Բոպիտակ ճամբէն

Ու սրտի ձայն է

Ոգին մէջ անցնող